

Ի.Ս.ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԼՈՒՐԻԿԸ

ՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1937

891.711Ա
Տ-96

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԼՈՐԻԿԸ

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարները Ե. ԼԻՍՍՆԵՐԻ

40714
41815

ՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1937

ՀԱԽՀ-ՍՍՀ

24 JUL 2013

ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ Եղ. Զոփուրյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ռ. Նշանյան

Գլավլիտի լիազոր 4—4468 հրատ. 3897
Պատվեր 1220, տիրաժ 3000
Գեհհրատի տպարան, Ցեռեվան, II Կնունյանցի, 4

Ցեռ տաս տարեկան ելի, յերբ ինձ հետ պատահեց այն, վոր յես հիմա կպատմեմ ձեզ։

Դա պատահեց ամառը։—Ցեռ ~~ապրում ելի~~ այն ժամանակ հորս հետ Ագարակում, հարավային Ռուսաստանում։ Ագարակի շուրջը, մի քանի վերստի վրա, ձգվում ելին արոտային վայրերը։ Վոչ անտառ կար մոտերքում, վոչ ել գետ. Թփուտներով ծածկված վոչ խոր հեղեղատները յերկար, կանաչ ոձերի նման կտրատում ելին այս ու այն տեղ հարթ ստեպը։ Առվակները հոսում ելին այդ հեղեղատների հատակով։ Տեղ տեղ, ամենադիք տեղերի տակին, յերևում ելին փոքրիկ աղբյուրներ, արցունքի նման մաքուր ջրով։ Դեպի աղբյուրներն ելին տանում բանուկ շավիղները և ջրի մոտ, հին ցեխի վրա խաչաձևվում ելին Թռչունների և մանրիկ գազանների հետքերը։ Նրանց համար լավ ջուրը նույնքան հարկավոր է, վորքան և մարդկանց։

Իմ հայրը մոլի վորսորդ եր։ Ցեվ յերբ զբաղված չեր լինում տնտեսությամբ, և յեղանակն ել լավ եր, նա վերցնում եր հրացանը, կախում ուսից վորսապանակը, կանչում իր ծեր Տրեզորին և ուղևորվում կաքավներ ու լորեր ~~խփելու~~ որսալու։ Նապաստակներին նա ուշք չեր դարձնում, տրամադրելով նրանց շներով վորս անողներին, վորոնց կոչում եր բարակալիններ։ Ուրիշ վորս մեզ մոտ չկար, գուցե մեկ մեկ աշնանը կտցարներ յերևային, բայց լորեր ու կաքավներ շատ կային, առանձնապես կաքավներ։ Հեղեղատների յեզրերին անընդհատ կարելի յեր հանդիպել չոր փոշու քանդված շրջաններ, այն տեղերը, վորտեղ նրանք փորփրում ելին։ Ծեր Տրեզորն անմիջապես կանգ եր առ-

նում, իսկ այդ ժամանակ նրա պոչը դողդողում եր և կաշին ճակատի վրա հավաքվում ծալքերով։ Իսկ հայրս գունատվում եր ու զգույշ բարձրացնում հրացանի շնիկը։ Նա հաճախ վերցնում եր ինձ իր հետ... Մեծ բավականություն եր դա ինձ համար։ Ցեռ շալվարս դնում եյի կոշիկներիս վզերի մեջ, կախում եյի ուսիցս ֆլյաժկան և ինքս ինձ վորսորդ եյի յերևակայում։ Քրտինքը հեղեղի նման հոսում եր վրայիցս, մանր քարերը լցվում եյին կոշիկներիս մեջ, բայց յես հոգնածություն չեյի զգում և հորիցս յետ չեյի մնում։ Իսկ յերբ լսվում եր կրակոցն ու թռչունը վայր եր ընկնում, յես ամեն անգամ տեղումս վեր եյի թռչում և նույնիսկ բղավում — այնքան դա ինձ ուրախություն եր պատճառում։ Վիրավորված թռչունը ծեծկվում եր ու թափահարում թևերը մերթ խոտի վրա, մերթ Տրեզորի ատամների մեջ, — նրանից արյուն եր հոսում, յես այնուամենայնիվ ուրախանում եյի, և վոչ մի խղճահարություն չեյի զգում։ Ինչ ասես չեյի տա, վոր յես ինքս կրակեյի հրացանն ու սպանեյի կաքավներ ու լորեր։ Բայց հայրս հայտարարել եր, վոր քսան տարեկանից շուտ յես հրացան չեմ ունենա։ Ցավ նա ինձ կտա միայն միափող հրացան՝ արտուտներ խփելու համար։ Արտուտներ մեզ մոտ շատ կային։ Պատահում եր, վոր լավ արևոտ որին ամբողջ տասնյակներով ճախրում եյին պարզ յերկնքում, բարձրանալով ավելի ու ավելի վեր և զրնգալով, վորպես զանգակիկներ։ Ցեռ նայում եյի նրանց, վորպես իմ ապագա ավարին և նրանց նշան եյի բռնում փայտով, վոր յես կրում եյի ուսիս հրացանի փոխարեն։ Նրանց խփելը շատ հեշտ է, յերբ գետնից յերկու յերեք արշինի վրա կանգ են առնում ոդի մեջ ու թրթռում, նախ քան հանկարծ խոտի մեջ թրմփալը։ — Ցերբեմն հեռու դաշտում, հնձած արտերում կամ կանաչկուտներում ցցվում եյին մեծ արոսները։ Այ, մտածում եյի յես, մի այդպիսի մեծն սպանես — դե դրանից հետո ապրելու ել կարիք չկա։

Ցեռ նրանց ցույց եյի տալիս հորս, բայց նա ամեն անգամ ասում եր ինձ, վոր մեծ արոսը զգույշ թռչուն է



Հայրս պատվիրեց Տրեզորին գնալ իր յետևից։

և մարդուն մոտիկ չի թողնում։ Սակայն մի անգամ նա փորձեց գաղտագողի մոտենալ մի միայնակ արոսի, յենթադրելով, որ նա խփված է և իր յերամից յետ է մնացել։ Հրամայեց Տրեզորին գնալ իր յետևից — իսկ ինձ բոլորովին մնալ իմ տեղում։ Լցրեց հրացանը կոտորակով, նորից մի անգամ յետ դառավ դեպի Տրեզորը, նույնիսկ սպառնաց նրան, շշուկով հրամայեց՝ «արբյեր, արբյեր», կծկվեց ամբողջ մարմնով և գնաց չե թե ուղիղ դեպի մեծ արոսը, այլ դեպի կողք։ Տրեզորը թեև չկծկվեց, բայց քայլում եր նույնպես շատ զարմանալի կերպով՝ — չռած վոտքերով, — պոչն ել կոխեց վոտքերի արանքն ու մի շըրթունքը կծեց։ — Ցես չդիմացա և գրեթե սողալով գնացի հորս ու Տրեզորի յետևից։ Սակայն մեծ արոսը յերեք հարյուր քայլի վրա նույնիսկ թույլ չավեց մեզ մոտենալ։ Սկըզբում վազեց, հետո թափահարեց թևերն ու թռավ։ Հայրս կրակեց և միայն նայեց նրա յետևից... Տրեզորը թռավ առաջ ու նույնպես նայեց։ Նայեցի և յես... և այնքան վիրավորված ելի զգում ինձ։ Դե ինչ կլիներ, որ մի փոքր սպասեր՝ կոտորակն անպատճառ կհասներ նրան։

Ահա մի անգամ յես ու հայրս գնացինք վորսի, — ճիշտ ս. Պետրոսի որվա նախընթաց որը։ Այդ ժամանակ մատղաշ կաքավները դեռ փոքր են լինում, հայրս չեր ուզում նրանց խփել և գնաց դեպի մանր կաղնու թփերը, հաճարի դաշտի մոտ, վորտեղ միշտ պատահում ելին լորեր։ Հնձելու համար այդ տեղերն անհարմար ելին, և խոտը յերկար մնում եր անձեռնմխելի։ Այդտեղ ծաղիկներ շատ կային — կըընկասիսեռ, յերեքնուկ, զանգակիկներ, մկնականջներ, դաշտային մեխակներ։ Ցերը յես գնում ելի այնտեղ քրոջս կամ աղախնու հետ, միշտ մի ամբողջ գիրկ հավաքում ելի դրանցից։ Բայց յերբ այդտեղ գալիս ելի հորս հետ, այլևս ծաղիկ չելի քաղում՝ յես գտնում ելի, որ այդ զբաղմունքը վորսորդին վայել չի։

Հանկարծ Տրեզորը կանգ առավ։ Հայրս բղավեց «քիս» և ուղիղ Տրեզորի քթի տակից դուրս փախավ մի լոր ու թռավ։ Միայն թռավ նա շատ տարորինակ ձևով՝ շուռ եր գալիս գլխի վրա, պտտվում, ընկնում եր դեպին — կարծես վիրավորված եր կամ մի թևը կոտրված։ Տրեզորը վորքան ուժ ուներ վազեց նրա յետևից... Նա այդպես չեր անում, յերբ թռչունը թռչում եր ինչպես հարկն է։ Հայրս նույնիսկ կրակել չեր կարող, նա վախենում եր, որ կոտորակը շանն ել կառնի։ Ցեվ հանկարծ տեսնում եմ՝ Տրեզորը գոռեց — ու հապ, բռնեց լորին, բերեց ու տվեց հորս։ Հայրս վերցրեց նրան ու դրեց իր ափը՝ փորը դեպի վերև։ Ցես ցատկեցի վեր։

— Ես ինչ է, ասում եմ, նա վիրավորված է յեղել։

— Չե, — պատասխանեց հայրս, — նա վիրավորված չի յեղել, այլ նա յերևի եստեղ մոտերքում բուն ունի իր փոքրիկներով և նա դիտմամբ ձևացավ վիրավորված, որ շունը կարծի, թե հեշտ է նրան բռնել։

— Իսկ ինչի՞ համար է նա անում այդ, — հարցրի յես։

— Դե նրա համար, որ շանը հեռացնի իր փոքրիկներից։ — Իսկ հետո նա լավ կթռչեր։ Միայն այս անգամին նա սխալ հաշիվ արեց, չափից դուրս ձևացավ և Տրեզորը նրան բռնեց։

— Ուրեմն նա վիրավորված չի՞, — հարցրի յես նորից։

— Չե, բայց կենդանի չի մնա... Տրեզորը նրան յերևի սեղմել է առամով։

Ցես ավելի մոտեցա լորին։ Նա անշարժ պառկել եր հորս ափի մեջ, գլուխը կախած և կողքանց նայում եր ինձ իր խաժ աչիկով։ Ցեվ յես հանկարծ այնպես խղճացի նրան։ Ինձ թվաց, թե նա նայում է ինձ ու մտածում՝ ինչի՞ համար պիտի մեռնեմ յես։ — Ինչի՞ համար։ Չե՞ որ յես իմ պարտքն ելի կատարում։ Իմ փոքրիկներին ելի ուզում փրկել, շանը հեռացնել — և ահա բռնվեցի։ Ախ, յես թըշվառս, թշվառս։ — Անարդարացի յե դա։ Անարդարացի՞ յե։

— Հայրիկ, — ասացի յես, — դե, գուցե, նա չի մեռնի... և ուզում ելի շոյել լորիկի գլուխը։ Բայց հայրս ասաց ինձ՝ — չե։ Ա՛յ, նայիր՝ հիմա նրա թաթիկները կձգվեն, նա ամբողջովին կդողդողա և կփակվեն նրա աչքերը։ — Հենց այդպես ել պատահեց։ Հենց որ նրա աչքերը փակվեցին

յես լաց յեղա։ — Ի՞նչ է յեղել, հարցրեց հայրս ու ծիծաղեց։ — Խղճում եմ նրան, — ասացի յես։ Նա իր պարտքն էր կատարում, իսկ նրան սպանեցին։ Դա անարդարացի յե։ — Նա ուզում էր խորամանկություն անել, — պատասխանեց ինձ հայրս։ — Միայն Տրեզորը նրանից ավելի խորամանկ դուրս յեկավ։ — Զար Տրեզոր, — մտածեցի յես... Յեվ հենց հայրս ել այս անգամին ինձ թվաց վոչ բարի։ Ել ինչ խորամանկություն, ասա՝ սեր դեպի ձագերը — և վոչ խորամանկություն։ Յեթե նրան պատվիրել են ձևանալ, վոր իր յերեխաներին փրկի — ուրեմն և Տրեզորը չպետք է բռներ նրան։ Հայրս ուզում էր դնել լորին վորսապանակը, բայց յես խնդրեցի, վոր տա ինձ, դրի նրան հոգատարությամբ յերկու ափերիս մեջ, շնչեցի նրա վրա... ուշքի չի՞ գա, արդյոք։ Սակայն նա չեր շարժվում։ — Զուր է, ախպեր ջան, — ասաց հայրս՝ — նա չի կարող հարություն առնել։ Տեսնում ես, նրա գլուխը թուլացել կախվել է։ — Յես կամացուկ վեր բարձրացրի նրա քթիկը։ Բայց հենց վոր ձեռքս յետ քաշեցի — գլխիկը նորից կախվեց։ — Դու դեռ խղճում ես նրան, — հարցրեց ինձ հայրս։ — Բա ով փոքրիկներին կկերակրի, — հարցրի յես իմ հերթին։ Հայրս ուշադիր նայեց ինձ։ — Մի անհանգստացիր, — ասում է՝ — արու լորը, նրանց հայրը, կկերակրի։ Ա՛յ, մի սպասիր, — ավելացրեց նա, — կարծես Տրեզորն ելի կանգ է առնում... չլինի դա հենց դրա բունն է։ Հենց բունն է, վոր կա։

Յեվ իսկապես... խոտի մեջ, Տրեզորի մոթից յերկու քայլ այն կողմ, իրար կպած, կողք կողքի պառկած ելին չորս ձագուկներ։ Սեղմվել են իրար, յերկարացրել են վզիկներն, ու բոլորն այնպես արագ, մի անգամից շնչում են... կարծես դողդողում են։ Յեվ արդեն փետուրներով ել են ծածկված։ Աղվամազ չկա նրանց վրա — միայն պոչները դեռ շատ կարճ են։ — Հայրիկ, հայրիկ, — բղավեցի յես սրտապատառ յեղած... — յետ կանչիր Տրեզորին, թե չե նա նրանց ել կսպանի։

Հայրս կանչեց Տրեզորին և, քաշվելով մի կողմ, նստեց

Յես իսկույն և յեթ փոսիկը փորեցի։

թիի տակ նախաճաշելու։ Իսկ յես մնացի բնի մոտ, չուզեցի նախաճաշել։ Հանեցի մի մաքուր թաշկինակ, դրի նրա վրա լորին... «Նայեք, իբր թե, վորբիկներ, ահա ձեր մայրը, նա իրեն զոհաբերեց ձեզ համար»։ Ճուտիկներն առաջվա նման շնչում էին արագ, ամբողջ մարմնով։ Հետո՞ յես մոտեցա հորս։— Կարող ես նվիրել ինձ այդ լորիկին,— հարցրի յես նրան։— Խնդրեմ։ Բայց ինչի՞դ ե պետք։— Ուզում եմ նրան թաղել։— Թաղե՞լ։— Այո, նրա բնի մոտ։ Տուր ինձ քո դանակը, յես նրա համար փոքրիկ գերեզման կփորեմ։— Հայրս զարմացավ — Վորպեսզի ձագուկները նրա գերեզմանն այցելեն,— հարցրեց նա։— Չե, պատասխանեցի յես՝— հենց ենպես... յես այդպես եմ ուզում։— Նրա համար լավ կլինի պառկել այստեղ, իր բնին մոտիկ։ Հայրս վոչ մի խոսք չարտասանեց, հանեց դանակն ու տվեց ինձ։ Յես իսկույն և լեթ փոսիկը փորեցի, համբուրեցի լորիկի կուրծքը, դրի նրան փոսիկի մեջ, ու ծածկեցի հողով։ Հետո յես նույն դանակով կտրեցի յերկու ճյուղ, մաքրեցի նրանց կեղևները, խաչաձև դրի իրար վրա, կապեցի սեզով ու տնկեցի գերեզմանին։ Շուտով մենք հորս հետ հեռացանք այդտեղից, բայց յես անընդհատ յետ եյի նայում... Խաչն սպիտակ եր — և հեռվից յերևում եր։

Իսկ գիշերը յես յերազ տեսա՝ իբր թե յերկնքումն եմ։ Յեվ ինչ։ Մի փոքրիկ ամպի վրա նստած ե իմ լորիկը, միայն նույնպես ամբողջովին սպիտակ ե, այն խաչի նման, և գլխի վրա փոքրիկ վոսկե պսակիկ կա, և իբր թե դա նրան տրված ե իբրև վարձատրություն նրա համար, վոր նա իր յերեխաների համար փնասվեց։

Մի հինգ որից հետո մենք հորս հետ յեկանք նորից նույն տեղը։ Յես գերեզմանիկն եկ դտա այն խաչով, վորը թեև դեղնել եր, բայց չեր ընկել։ — Սակայն բնիկը դատարկ եր, ձագուկների հետքն ել չկար։

Հայրս ինձ հավատացրեց, վոր ծերունին նրանց տարել ե, նրանց հայրը,— և յերբ այդտեղից մի քանի քայլի

Վեր կացա ու ծափ տվի։

վրա թափի տակից դուրս թռավ ծերունի լորը, նա չկրակեց նրա վրա... Ցեվ յես մտածեցի՝ «Չէ, հայրիկս բարի յե»

Բայց ահա թե ինչն է զարմանալի՝ այդ որվանից կորավ իմ սերը դեպի վորսորդությունը, և յես արդեն չեյի մտածում այն ժամանակի մասին, յերբ հայրս ինձ հրացան կնվիրի։ Սակայն յերբ յես մեծացա, յես ել սկսեցի կրակել, բայց իսկական վորսորդ յերբեք չդառա։ Ահա թե ելի ինչն եր վոր ինձ փախցրեց վորսորդությունից։

Մի անգամ յերկսով, յես ու ընկերս ցախաքլորի վորսի ելինք գնացել։ Գտանք մի ամբողջ բուն — մայրն ու ճուտերը։ Մայրը վեր թռավ, մենք կրակեցինք ու խփեցինք նրան։ Բայց նա չընկավ. այլ շարունակեց թռչել յերիտասարդ ցախաքլորիկների հետ միասին։ Յես ուզեցի գնալ նրանց յետևից, բայց ընկերս ասաց ինձ՝ «Ավելի լավ է եստեղ նստենք և մոտ կանչենք նրանց... բոլորն ես բոպելիս եստեղ կլինեն»։ Ընկերս շատ լավ շվացնում եր, ինչպես շվացնում են ցախաքլորները։ Մենք նստեցինք։ Նա սկսեց շվացնել։ Ցեվ իսկապես, սկզբում փոքր ցախաքլորներից մեկը ձայն տվեց, հետո մյուսը, և ահա լսում ենք՝ ինքը մայրը կրկրում է և այնպես քնքուշ ու մոտիկից։ Յես բարձրացրի գլուխս և տեսնում եմ՝ խճճված խոտի սեզերի միջից դալիս է նա դեպի մեզ, շտապում է, շտապում, իսկ իր կուրծքն ամբողջովին ծածկված է արյունով։ Կնշանակի չդիմացավ մայրական սիրտը։ Ցեվ այդտեղ յես ինքս ինձ թվացի մի չարագործ... Վեր կացա ու ծափ տվի։ Ցախաքլորն իսկույն թռավ և փոքրիկ ցախաքլորներն սկվեցին։ Ընկերս բարկացավ, նա ինձ խելագարի տեղ դրեց... «Դու փչացրիր ամբողջ վորսը»։

Բայց ինձ համար այդ որվանից քանի գնում ավելի ծանր եր դառնում սպանել ու արյուն թափել։

ՀՀ Ազգային գրադարան
NL0391438

151

5503

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

И.С.Тур
ПЕР
ГИ

89171
S-96